Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ՝ ԽՈՍՔ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Զինվորյալ միաբանությունս հանուն Սուրբ Էջմիածնի իր հոգեփրկչական եւ ազգապահպան առաքելությունն աշխարհասփյուռ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանում մշտապես իրականացրել է նվիրումով, հովվական ու վարդապետական անխոնջ քարոզչությամբ կրթել, սնել ու խնամել է իր հոգածությանը հանձնված հայ հավատացյալին՝ ի գլուխ ունենալով Հայոց Հայրապետին։

Քրիստոս, որ Իր կյանքով օրինակ է մեզ համար եւ Իր ամենօրյա ներկայությամբ կենդանության Աղբյուր մեր մեջ, առաջնորդության կոչված ընտրյալին էլ ավելի մեծ շնորհ ու կարողություն է պարգեւում՝ լինելու առաջին սպասավորը եւ իր հետեւից տանելու մեզ՝ ուխտյալ միաբաններիս, որպեսզի անսայթաք մնանք մեր առաքելության մեջ։

Ս. Թադեոսի եւ Ս. Բարդուղիմեոսի առաքելահաստատ Աթոռի արժանավոր հաջորդն այսօր ազգընտիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսն է, որ աստվածապարգեւ կյանքի 70 օրհնյալ տարիներից երկու տասնամյակից ավելին Տիրոջից կոչված է Մայր Եկեղեցին տերունական շավիղներով առաջնորդելու։

Ամենայն Հայոց Կաթողիկոսները հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում մշտապես բացառիկ դերակատարություն են ստանձնել՝ հանդիսանալով ոչ միայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետության գլուխը, այլեւ համայն հայության միասնության կենդանի խորհրդանիշը եւ հոգեւոր ու ազգային ինքնության կրողն ու մշտարթուն պահապանը։

Իր ուսերին դրված ծանր պատասխանատվության եւ առաքելության բարձր գիտակցությամբ Հայոց Հայրապետն այսօր եւս առ Աստված հավատով եւ նվիրումով հովվում ու անբեկանելի կամքի շնորհիվ դիմակայում եւ հաղթահարում է մեր աշխարհասփյուռ փոքր ածուի եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները՝ մեր Սուրբ Եկեղեցին հաստատուն կերպով տանելով առաջընթացի եւ վերազարթոնքի ուղիով։

Կրթադաստիարակչական, ընկերային, միջեկեղեցական, հայրենաշինական, եկեղեցաշինական ծրագրերը, որոնք տասնամյակների

ընթացքում տեսիլքներից իրականություն են դարձել, լավագույն ապագույցն են ապրված կյանքն արժեւորված տեսնելու եւ գնահատելու։

Որդիական ջերմությամբ եւ խոնարհումով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զիվորյալ միաբանության անունից ի խորոց սրտի շնորհավորում ենք Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 70-րդ հոբելյանը՝ մաղթելով քաջառողջություն եւ հայրապետության երկար ու խաղաղ տարիներ։ Միաբաններիս հարատեւ աղոթքն է առ Աստված, որ Տերն Իր սուրբ շնորհներով ավելի ամրապնդի եւ զորացնի Հայոց Հայրապետին, որպեսզի մեր աշխարհասփյուռ ազգը նրա հովվությամբ դեռ երկար տարիներ քայլի խաղաղության եւ փրկության ճանապարհով։

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆ
Լուսարարապետ